Դաս 14. Ավանդապատումներ՝ տեղանքի հետ կապված (Շիրակ, Արագած լեռ, Փարվանա լիճ)

Լրացուցիչ նյութ

Ծովինար տեղանվան ավանդությունը

Ժողովրդական ավանդությունը պատմում է, որ Մարտունու տարածաշրջանի Սևանա լճի ափին մոտ գտնվող Ծովինար և Արծվանիստ գյուղերի տարածքում քաղցրահամ ջրի մի աղբյուր է եղել: Այդ անմահական ջուրը մարդիկ շատ խնայողաբար էին օգտագործում՝ խմելուց հետո անմիջապես փակում էին աղբյուրի ակը:

Մի անգամ Ծովինար անունով մի նորահարս ջուր վերցնելուց հետո անփութորեն բաց է թողնում աղբյուրի ակունքը: Մինչև լույս աղբրի ջուրը հոսում է, լցվում շրջակայքը, կործանում է աղբյուրի ակունքը ու գոյացնում մի լիճ:

Առավոտյան ջրի եկած առաջին կինը՝ տեսնելով կատարվածը, անիծում է անշնորհք հարսին: Անեծքից նորահարսը քար է դառնում: Սակայն հետո, տեսնելով, թե իրականում այս լիճը ինչքան օգուտ է բերում բնակչությանը, անեծքով քարացած հարսի պատվին գյուղը կոչել են Ծովինար: